Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

# Առավոտ

a r a v o t d a i l y

94/4190/ 22 մայիսի 2012 երեքշաբթի

ISSN 1829-2224

## Ա

# Քաղաքական «անտուրաժ»

Ինչպես կոալիցիա կազմել-չկազմելու, այնպես էլ ՀԱԿ-ից կուսակցությունների դուրս գալու-չգալու խնդրին մեր քաղաքականացված շրջանակները եւ, համապատասխանաբար, ԶԼՄ-ները չափից դուրս մեծ ուշադրություն են դարձնում: Այս՝ վերջին գործընթացում լուրջ խնդիրը միայն «Հանրապետության» դուրս գալն էր. ազնիվ, ոչ նոմենկլատուրային երկրապահները, ազատամարտիկները մեր հասարակության մեջ որոշակի հեղինակություն են վայելում, իսկ այդ կուսակցությունն, այսպես թե այնպես, կապված է հենց այդ շրջանակների հետ: Ընդ որում, չնայած այդ «ֆիդայական» ծագումնաբանությանը, «Հանրապետության» անդամներն ավելի լայնախոհ եւ պակաս պարանոյիկ են, քան ՀԱԿ-ի որոշ անդամներ: «Հանրապետությունն» ունի նաեւ որոշակի «կազմակերպչական» ռեսուրս՝ այնքանով, որքանով «կռված տղաները» երբեմն կարող են դիմադրել ընտրակեղծարարներին:

Մնացած կուսակցությունները՝ ԼԴԿ-ն, Պահպանողականը, «Ժողովրդավարական հայրենիքը», «Հայրենիք եւ պատիվը» դուրս գան Կոնգրեսից, թե կմնան այնտեղ՝ որեւէ նշանակություն չունի: Այդ կառույցների ղեկավարները, անշուշտ, հարգարժան մարդիկ են, բայց խնդիրն այն է, որ կառույցները, որպես այդպիսիք, այնտեղ գոյություն չունեն՝ կան համախոհների խմբեր, որոնք քաղաքական դաշտի վրա որեւէ ազդեցություն չունեն: Դրանով ես չեմ ուզում ասել, որ, ասենք, Հանրապետականի ազդեցությունը պայմանավորված է քաղաքական գործոններով. եթե Սերժ Սարգսյանը նախագահ չլինի, եւ հաջորդ նախագահը չորոշի, որ հենց ՀՀԿ-ից պետք է քաղաքական հենարան սարքել, այդ «հզոր» եւ «ազդեցիկ» կուսակցությունից գրեթե ոչինչ չի մնա՝ մեծ մասը կփախչի ճիշտ նույն արագությամբ, ինչպես 97-ին փախել է ՀՀՇ-ից եւ «Հանրապետություն» բլոկից: Եթե որոշվի, որ, օրինակ, «Միավորված հայերն» է լինելու իշխանության հենարանը, ապա ա՛յդ կուսակցությունն է դառնալու «գերհզոր», եւ ամբողջ նոմենկլատուրան կդառնա Պլուտոնի երկրպագու: Խնդիրը հենց այն է, որ «քաղաքական ուժեր», «կուսակցություններ» եւ նույնիսկ «իշխանություն», «ընդդիմություն» եզրերը Հայաստանում պետք է կիրառել խիստ վերապահությամբ:

Իմաստային, բովանդակային առումով «18 կուսակցություն» իրար գլխի հավաքելը նույնն է, ինչ որ «իշխանական կոալիցիա» ստեղծելը: Վերջինիս կազմավորման նպատակը մեկն է՝ սատարել գործող նախագահին առաջիկա նախագահական ընտրություններում: Իհարկե, մոտ օրերս ստորագրվելիք կոալիցիոն հուշագրում բազմաթիվ «քաղցր կենացներ» կգրվեն: Դրանից իմաստը չի փոխվի:

Նույնը ՀԱԿ-ը. կա Լեւոն Տեր-Պետրոսյանի անձը, եւ կա նրա «մենեջմենթը», որը կոչվում է ՀԱԿ-ի կենտրոնական գրասենյակ: Մնացածը «անտուրաժ» է, քաղաքական թատերաբեմի ռեկվիզիտ: Որեւէ մեկը կասկածո՞ւմ է, թե ինչպես են ՀԱԿ-ում որոշումներ ընդունվում:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# «Դրանց դեմ ամեն ձեւ էլ կարելի է պայքարել՝ բացի տրաքացնելուց»



Երեկ Aravot.am-ը ՀՖՖ նախագահ, ԱԺ պատգամավոր Ռուբեն Հայրապետյանից հետաքրքրվեց, թե նույնասեռականների DIY ակումբը պայթեցնելու դեպքի մասին ի՞նչ կարծիք ունի, եւ ինքը պայթեցնողների՞ կողմնակիցն է, թե՞ ակումբի պաշտպանների: Նա պատասխանեց. «Նախ, ցանկացած ժամանակ տեռորը դատապարտված է իմ կողմից եւ վատ բան է: Իհարկե, դեմ եմ պայթեցնելուն, բայց միասեռականներին պատժելուն ես երկու ձեռով եմ կողմ եւ պատրաստ եմ նույնիսկ անել դա»: Պարոն Հայրապետյանը չի ընդունում ակումբը պայթեցնելու միջոցով միասեռականներին եւ լեսբուհիներին պատժելու տարբերակը: Նրա խոսքերով՝ «Դա պատժելու ձեւ չի: Ավելի ուրիշ ձեւ պետք է մտածել՝ նրանց այս հասարակությունից ուղղակի վերացնել: Դրանց դեմ ամեն ձեւ էլ կարելի է պայքարել՝ բացի տրաքացնելուց ու պայթեցնելուց»: Երեւանում երեկ բազմազանության երթ, որը շատերը «գեյ շքերթ» են համարել, անցկացնելու մասին տեղեկությանն էլ Ռուբեն Հայրապետյանի սիրտը չդիմացավ: Նա բռնեց սիրտն ու ասաց. «Խնդրում եմ ես ձեզ, նենց բաներ եք ասում, որ ես վատանում եմ: Ես այս երկիրն ու ժողովրդին շա՛տ եմ սիրում, վախեցա»:

Իսկ թե ինչպիսի ավարտ ունեցավ բազմազանության երթը՝ էջ 2:

## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### ՕԵԿ-ը կկազմի կոալիցիա

«Կոալիցիոն գործընկերությունը շարունակվել եւ շարունակվելու է այն համաձայնագրի ոգով, որը 2008 թվականին ձեւավորվել է ՀՀԿ-ի եւ ՕԵԿ-ի միջեւ, ինչը պայմանավորված է Սերժ Սարգսյանի եւ Արթուր Բաղդասարյանի անձնական հարաբերություններով եւ երկրի առջեւ ծառացած մարտահրավերներին համարժեք արձագանքելու հրամայականով»,- երեկ «Առավոտի» հետ զրույցում ասաց ՕԵԿ փոխնախագահ Միեր Շահգելդյանը:

Կարդացեք էջ 3

### Քննարկումների փուլում են գտնվում

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության համամասնական ցուցակի 9-րդ հորիզոնականը զբաղեցնող Հմայակ Հովհաննիսյանը «Ռեգնում» գործակալությանը տված հարցազրույցում ասել էր, թե ՀՀԿ-ի եւ ԲՀԿ-ի միջեւ, ըստ էության, կոալիցիա կազմելու շուրջ սկզբունքային համաձայնություն է ձեռք բերվել: Aravot.am-ի հետ զրույցում ՀՀԿ գործադիր մարմնի անդամ Գագիկ Մինասյանը նախ նեղսրտեց, որ իրեն հարց տալիս մեկ այլ գործչի հայտարարությունն ենք բերում իբրեւ հիմնավորում, ապա հարցին՝ այնուհանդերձ, կոալիցիա կազմելու շուրջ արդեն առկա՞ է սկզբունքային համաձայնություն, պատասխանեց. «Ես կարծում եմ, որ մենք գտնվում ենք քննարկումների փուլում»:

### Ռուսաստանում նշանակվեց նոր կառավարությունը

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը երեկ հրամանագիր է ստորագրել երկրի նոր կառավարության կառուցվածքի եւ կազմի մասին: «Ազատություն» ռ/կ-ի փոխանցմամբ՝ Դմիտրի Մեդվեդեւի կառավարությունում 21 նախարար կա, 7 փոխվարչապետ: Վարչապետի առաջին տեղակալ է նշանակվել Իգոր Շուվալովը: Ստեղծվել են նախարարական երկու նոր՝ Հեռավոր Արեւելքի հարցերով եւ բաց կառավարության հետ կապերի գծով նախարարների պաշտոններ: Հին կառավարությունից իրենց պորտֆելները պահպանել են արտգործնախարար Սերգեյ Լավրովը, պաշտպանության նախարար Անատոլի Սերդյուկովը եւ արդարադատության նախարար Ալեքսանդր Կոնովալովը:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Ասուլիս

Այսօր, ժամը 12-ին, «Արցախ» ճամուլի ակումբի հյուրն է սոցիոլոգ Ահարոն Ադիբեկյանը:

### Եղանակ

Երեւան +13 +26, Շիրակ +3 +18, Կոտայք +3 +18, Գեղարքունիք +3 +18, Լոռի +6 +20, Տավուշ +8 +23, Արագածոտն լեռներ +3 +18, Արագածոտն նախալեռն. 10 +25, Արարատ +12 +27, Արմավիր +12 +27, Վայոց Ձոր լեռներ +3 +18, Վայոց Ձոր նախալեռն. +12 +27, Սյունիքի հովիտներ +10 +27, Սյունիքի նախալեռներ +5 +20, Արցախ +9 +23

# «ԲՀԿ-ն երբեւիցե չի եղել իշխանության մեջ»

ԲՀԿ քաղխորհրդի անդամ Տիգրան Ուրիխանյանը, ի պատասխան «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Ստյոպա Սաֆարյանի հարցադրման, պնդում է, որ նախարարական 4 պորտֆել ունեցող ԲՀԿ-ն անցած 5 տարիներին ոչ թե եղել է իշխանության մեջ, այլ ընդամենը որոշակի հարցերում աջակցություն է ցուցաբերել ՀՀԿ-ին: Քաղաքական գործիչների «Դեմ առ դեմ» առցանց բանավեճն ամբողջությամբ կարող եք դիտել aravot.am կայքում: Ստորեւ ներկայացնում ենք որոշ հատվածներ:





«Առավոտ»- Պարոն Սաֆարյան, Ձեր կարծիքով՝ ինչի՞ շուրջ չեն կարողանում համաձայնության գալ «Բարգավաճ Հայաստանն» ու Հանրապետական կուսակցությունը:

Ստեփան Սաֆարյան- Դատելով հայտարարություններից՝ ԲՀԿ-ն գոհ չէ ընտրությունների արդյունքներից, որովհետեւ ակնկալում էր իր ստացած քվեներով գերազանցել ՀՀԿ-ին: Թեեւ 2007 թ. համեմատ ԲՀԿ-ն բարելավել է իր ցուցանիշները, այդուհանդերձ դա այն չէր, ինչին ձգտում էր եւ ինչին հասավ այդ կուսակցությունն այս ընտրություններում: Ըստ որում, պիտի արձանագրենք, որ դրան նա հասավ բավականին ընդդիմադիր հռետորաբանության շնորհիվ՝ քննադատության ենթարկելով վերջին 5 տարիներին վարվող քաղաքականությունն ու կառավարության գործունեությունը: Եվ հիմա, ունենալով այդ ընդդիմադիր հռետորաբանությունը, իրենք խնդիր ունեն ցանկացած քայլ կատարելիս հաշվի առնել իրենց ընտրողների շահերը: Եվ այս իրավիճակում մտնել մի այնպիսի կոալիցիայի մեջ, որում եղել են 2007թ.-ին, ըստ էության լուրջ հարված կհասցնի ԲՀԿ ընտրազանգվածին, որովհետեւ դրա մի զգալի մասը հավատացել է, որ ԲՀԿ-ն ընդդիմադիր է ՀՀԿ-ին: Եվ հիմա խնդիր կա, որ եթե անգամ մտնելու են կոալիցիա, իսկ ես դրանում չեմ կասկածում, ապա դա լինի այնպիսի մի բան՝ թե նախարարական պորտֆելների ավելի լինելու, թե ձեւակերպումների առումով, որը թույլ կտա «Բարգավաճ Հայաստանին» պահպանել իր դեմքը: Սրան գումարած՝ նաեւ այն, որ 2011թ. փետրվարի 17-ից հետո ԲՀԿ-ն խուսափում էր հայտարարել, որ 2013թ. նախագահական ընտրություններում սատարելու է Սերժ Սարգսյանի թեկնածությունը: Իսկ այս պահին ՀՀԿ-ի կողմից առաջադրվող պայմաններից մեկը, վստահ եմ, դա է:

«Առավոտ»- Պարոն Ուրիխանյան, համաձա՞յն եք այն տեսակետին, որ ՀՀԿ-ի հետ կոալիցիա կազմելու դեպքում դուք կսասանեք ձեզ ընտրողների հավատը:

Տիգրան Ուրիխանյան- Մենք բազմիցս հայտարարել ենք, որ ԲՀԿ-ն չի կաշկանդվելու որեւէ այլ ուժի սահմանափակումներով եւ պահանջներով, այդ թվում եւ՝ մեծամասնություն կազմած քաղաքական ուժի: Կոալիցիա մտնել-չմտնել բառակապակցությունն ինձ համար այդքան էլ ընդունելի չէ, խոսքը համատեղ կառավարման մասին է: Եթե որեւէ քաղաքական ուժ, այդ թվում եւ՝ մեծամասնություն ձեռք բերած, ունի մեր կարիքը երկիրը զարգացման, առաջընթացի եւ բարգավաճման հուն հանելու համար, ուրեմն այն չպետք է որեւէ նախապայման առաջադրի: Խոսք չի գնում ոչ մեկին միանալու, խոսք չի գնում ոչ մեկի հետ ոչ մի համատեղ պլաններ, ծրագրեր իրականացնելու մասին: Խոսքը գնում է մեր մասով մեզ վստահված չափաբաժնին համապատասխան՝ իրականացնել այն ամենը, ինչ մեզանից ակնկալում են:

Ս. Սաֆարյան- 2000-ականներից սկսած՝ ես այդ կոալիցիա կոչվածը համարել եմ ուղղակի փախուստ պատասխանատվությունից: Հիշենք բոլոր կոալիցիաները, որոնց մեջ եղել է Դաշնակցությունը, հետո դուրս եկել, հետո եղել է ՕԵԿ-ը, էլի դուրս եկել, հետո նորից մտել, այսինքն՝ այն տպավորությունն է, որ դա եղել է ռուսերեն ասած՝ «ՊՐՈՒՏՈՊԱՏՈՐ ՊՈՏՐ»՝ կարելի է հա դուրս գալ-մտնել, դուրս գալ-մտնել՝ առանց հիմնավորելու, թե ինչու են մտել եւ ինչու են դուրս գալիս: Հիմա շատ հարգելով ԲՀԿ մեր բազմաթիվ գործընկերներին, ում հետ աշխատել եմ, ես չեմ կարող հասկանալ. գնահատական է տրվում, որ ընտրությունների արդյունքները չեն արտացոլում հասարակության ներսում առկա պատկերը: Սա գրեթե ուղղակի մեղադրանք է ՀՀԿ-ին՝ ընտրությունները կեղծելու, ասել է թե՝ իշխանությունը յուրացնելու մեջ: Եվ դրանից հետո կազմել կոալիցիա, կամ ինչպես Տիգրան Ուրիխանյանը ձեւակերպեց՝ համատեղ կառավարել, ես դա չեմ հասկանում:

Տ. Ուրիխանյան- Ոչ, ոչ, ես ասացի, որ մենք ոչ մի բան չենք համատեղելու, եթե մենք չկարողանանք իրականացնել մեր սեփական, մեր առանձին քաղաքական կուրսը՝ գնալով այն լուծումներին, որոնք որ մեր առջեւ դրել են մեր ընտրողները:

«Առավոտ»- Ներկայացրեք, խնդրեմ, թե ինչպես եք դուք դա քաղաքագիտորեն պատկերացնում՝ ի՞նչ մեխանիզմով, ինչպե՞ս եք դա անելու:

Տ. Ուրիխանյան- Ի տարբերություն մյուս բոլոր կուսակցությունների, որոնք հետապնդում են սեփական քաղաքական շահը տակտիկայի մեջ, ինչը շատ ողջունելի է...

Ս. Սաֆարյան- Բոլոր քաղաքական ուժերն են իրենց քաղաքական շահը հետապնդում:

Տ. Ուրիխանյան- Մենք առաջնայնորեն հետապնդում ենք մեր ընտրողների շահերը:-

Ս. Սաֆարյան- Ձեր ընտրողներին ասել եք, որ դուք ընդդիմություն եք Հանրապետականին:

Տ. Ուրիխանյան- Մենք ցենտրիստական կուսակցություն ենք, մենք երբեւէ ընդդիմադիր եզրը մեզ թույլ չենք տվել շահարկել: Եվ ես կրկնում եմ ու անընդհատ եմ կրկնելու, որ ինչքան էլ ուրիշները փորձեն մարդկանց գիտակցության մեջ մտցնել կոալիցիա, համատեղ, միանալ արտահայտությունները, ես դրան հակառակ հնչեցնելու եմ առանձին, սեփական քաղաքական կուրս: Իսկ թե դա ինչպիսի փաստաթղթային ձեւակերպում կստանա, իմ համոզմամբ, երկրորդական է:

Ս. Սաֆարյան- Այնուամենայնիվ, ինչպիսի թղթով էլ լինի, եթե երկու քաղաքական ուժ գտնվում են նույն կառավարության կազմում, դա կոչվում է կոալիցիա, հիմա դրա անունն ինչ էլ դնենք՝ այնուամենայնիվ, դա կոչվում է կոալիցիոն դաշնային կառավարում, որտեղ կա կոլեկտիվ պատասխանատվության խնդիրը:

Տ. Ուրիխանյան- ԲՀԿ-ն ասում է, որ մյուս քաղաքական ուժերը պետք է պատասխանատվություն կրեն հավասարապես այն ամենի համար, ինչ տեղի է ունեցել (ընտրություններում Ա. Ս.), եւ ինչո՞ւ նրանք այդ պատասխանատվությունը չեն կրում:

Ս. Սաֆարյան- Բայց դուք իշխանության մեջ եք հենց այս պահին:

Տ. Ուրիխանյան- Մենք իշխանության մեջ չենք: Մենք իշխանության մեջ երբեւէ չենք եղել, մենք ցուցաբերել ենք աջակցություն որոշակի համատեղ կառավարման ծրագրերում:

Ս. Սաֆարյան- Բայց ձեր նախարարները հրաժարական չեն տվել դեռեւս, պարոն Ուրիխանյան:

Տ. Ուրիխանյան- Հիմա կա՞ կոալիցիոն կառավարում: Կա դե ֆակտո իրավիճակ՝ շատ ժամանակ դե յուրե իրավիճակին գերակայող:

Բանավեճը վարեց

ԱՐԵՎԻԿ ՍԱՀԱԿՅԱՆԸ

Նախագիծն իրականացվում է «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» ծրագրի շրջանակներում:

ՍԻՎԻԼԻԹԱՍ ՀԻՄՆԱԴՐԱՄ THE CIVILITAS FOUNDATION

«Սիվիլիթաս» հիմնադրամը հրավիրում է «Հակամարտություններ եւ պատմության դասագրքեր» թեմայով քննարկմանը:

Ինչպե՞ս են դասավանդում պատմությունը եւ ինչպե՞ս են այն գրում: Ո՞րն է պատմության դասագրքի նպատակը: Ինչպե՞ս են հակամարտություններում ներգրավված անձինք գրում եւ ուսուցանում ժամանակակից պատմությունը: Ինչպե՞ս են դասագրքերն արտացոլում պատմական հակամարտությունները: Այս եւ հարակից այլ հարցերի շուրջ կխոսեն հայ եւ ուկրաինացի մասնագետները:

Բանախոսներն են՝

Կարինա Կորոստելինա

Ջորջ Մեյսոն համալսարան

Փիլ Գամաղելյան

«Իմեջին» հակամարտությունների կենտրոն

Վահրամ Տեր-Մաթեւոսյան

Հայաստանի ամերիկյան համալսարան

Քննարկումը կվարի

«Սիվիլիթաս» հիմնադրամի տնօրեն

Սալբի Ղազարյանը

Քննարկումը տեղի կունենա

Մայիսի 22-ին, ժամը 14:00-ին,

«Երեւան» հյուրանոցի «Ռոսինի» սրահում:

Քննարկումը կարելի է դիտել CivilNet am կայքում

Մասնակցությունը միայն նախնական գրանցումով՝ 010 500 119:

Տեղերը սահմանափակ են:

# Բազմազանության շքերթն սկսվեց ու ավարտվեց բախումներով

Երեկ բազմազանության միջազգային օրվա առիթով մի խումբ հասարակական կազմակերպություններ բազմազանության շքերթ էին կազմակերպել, որը սկսվեց ու ավարտվեց բախումներով: Մի խումբ երիտասարդներ՝ «Սրանք գոմիկներ են» պաստառներով ու «Գոմիկներին՝ Բաքու» արտահայտություններով դիմադրում էին շքերթի կազմակերպիչներին:

Վերջիններս շքերթի ընթացքում քարոզում էին՝ «ոչ խտրականությանը, այո՝ բազմակարծությանը»՝ երիտասարդներին համարելով ֆաշիստական կազմակերպության անդամներ: «Այս երիտասարդները շատ պահպանողական են, ազգայնամոլ եւ ֆաշիստական սկզբունքներ ունեն: Չեն թելադրում հանդուրժողությունը հասարակության մեջ, իրենց ձեւով են ուզում ընկալել, ես դեմ չեմ, նրանք ազատ են, բայց պետք չէ բռնարար կերպով, հաստատություններին վրա ռումբ գցելով, մարդկանց վրա հարձակվելով, ինչպես արեցին, ոստիկանները մեզ հազիվ փրկեցին»,- իր կարծիքը հայտնեց ակցիայի մասնակից, «Թուֆենկյան հիմնադրամի» ներկայացուցիչ Մարո Մաթոսյանը՝ նշելով, որ ակցիայի միջոցով փորձում են պաշտպանել նաեւ Հայաստանում սեռական փոքրամասնությունների շահերը:



Ակցիային միացած երիտասարդները, որոնք շատ անգամ նաեւ խուսափում էին նշել իրենց անունները, քննադատում էին շքերթի կազմակերպիչներին, նրանց հայհոյում ու ժամանակ առ ժամանակ հարձակվում կազմակերպիչների վրա: Ծեծկռտուքն ավարտվում էր ոստիկանների միջամտությունից հետո:

Երթը, որը սկսվել էր Կասկադին հարող տարածքից, ավարտվեց Նկարիչների միության շենքի մոտ: Այստեղ երկու թեւի բաժանված մասնակիցները կրկին հարձակվեցին միմյանց վրա, հայհոյանքներով ու գոռոցներով: Ոստիկանները կրկին միջամտեցին՝ նրանց միջեւ կանգնելով: Նկարիչների միությունում շքերթի կազմակերպիչները նաեւ ցուցահանդես էին նախատեսել: Նրանք շենքից հեռացան հետնամուտքով: «Գոմիկների դեմ» պայքարող երիտասարդների հետ էր նաեւ բլոգեր Տիգրան Քոչարյանը. «Մենք արդեն գնում ենք տուն, որովհետեւ մեր բողոքն արտահայտեցինք ու վերջ: Մեր բողոքը ոչ թե մշակութային բազմազանության, այլ այն գաղափարների դեմ է, որ ազգի վզին փաթաթում են»:

Նրանք հեռացան «հաղթեցինք» բացականչություններով: Ակցիայի վերջում ոստիկանությունը բերման ենթարկեց նաեւ ակտիվիստներից մեկին, ով, ըստ լրագրողներից մեկի ահազանգի, իրեն հայհոյել է: Ակտիվիստները, սակայն, վստահեցրին, որ լրագրողը «պրովոկացիա» է անում, որովհետեւ նրա կողքին կանգնած են եղել, ու նման բան չի եղել:

ԱՐՓԻՆԵ ՍԻՄՈՆՅԱՆ

Ա aravot daily
ԵՐԵՔՇԱԲԹԻ 22.05.2012

# «Մեր ստացած ձայներն ավելի քիչ էին, քան անդամները»

## ՕԵԿ փոխնախագահ Միեր Շահգելդյանը կարծում է, որ շատ մարդիկ տուրք տվեցին ընտրակաշառքներին

- Ի՞նչ եք կարծում, ի վերջո կոալիցիա կձեւավորվի՞, եւ Ձեր դիտարկմամբ՝ ո՞ր ուժերը կլինեն այդ կոալիցիայում:

- Կոալիցիա, կարծում եմ, կձեւավորվի, ինչ վերաբերում է ուժերին, պատասխանը կլինի այն ժամանակ, երբ որոշումները կընդունվեն: Ինչպես ասում են՝ առաջ շընկնենք եւ սպասենք վերջնական մոտեցումներին ու տարբերակներին:

- ՕԵԿ-ն ի՞նչ հավակնություններ ունի: Հաջորդ կառավարությունում ի՞նչ չափով եւ ձեւով է ցանկանում ներկայացված լինել:

- Դա հավակնությունների եւ ցանկությունների խնդիր չէ: Կառավարությունում գործունեությունը առաջին հերթին պատասխանատվություն է եւ ծանրաբեռնված աշխատանք: Գործադիրում մեր գործընկերները այսօր շարունակում են պաշտոնավարել: Հաջորդ կառավարության ձեւավորումը կլինի արդեն ըստ սահմանված կարգի:

- Ընտրությունների եւ հատկապես հետընտրական շրջանում շատ քաղաքական ուժերի ներկայացուցիչներ ՕԵԿ-ին մեղադրեցին ՀՀԿ-ի կցորդը լինելու մեջ, անգամ վիրավորանքի հասնող համեմատություններ արեցին: Ի՞նչ կպատասխանեք:

- Նախ համաձայն չեմ, որ շատ քաղաքական ուժեր նման բան են ասել, բայց միաժամանակ պետք է փաստենք, որ, ցավոք, քարոզարշավի ընթացքում ՕԵԿ-ի դեմ կիրառվեց եւ հակաքարոզչություն, եւ սեւ PR: Կցանկանայի շեշտել, որ մենք սկզբունքորեն երբեք չենք կիրառել սեւ քարոզչություն, լիովին զերծ ենք եղել քաղաքական ուժերին եւ գործիչներին վարկաբեկելու կեղտոտ տեխնոլոգիաների կիրառումից: Ավելին, այդ երեւույթը դիտարկում ենք դատապարտելի եւ անընդունելի, համարում ենք, որ այն պետք է արմատախիլ արվի հայկական քաղաքական կյանքից: Երկրորդ՝ «Օրինաց երկիր»-ը մշտապես աշխատել եւ գործել է սեփական մոտեցումների հիման վրա: Ստեղծման առաջին իսկ օրվանից բոլոր համապետական ընտրություններում




ՕԵԿ-ը վաստակել է ժողովրդի քվեն բացառապես սեփական պայքարի եւ քրտնաջան աշխատանքի արդյունքում: Նվազագույն ազնվություն եւ քաղաքականության վերաբերյալ նույնիսկ մակերեսային գիտելիքներ ունեցող յուրաքանչյուր անձ կփաստի այն հսկայական աշխատանքը, որ ժողովրդի համար կատարել են կուսակցությունը եւ ՕԵԿ նախագահ Արթուր Բաղդասարյանը՝ կուսակցության գործունեության բոլոր տարիների ընթացքում: Կույր պետք է լինել կամ ձեւանալ՝ չտեսնելու համար վերջին ընտրությունների ընթացքում մեր հանրահավաքների բազմամարդությունը, ժողովրդի հետ հանդիպումների ինտենսիվությունը, ամբողջ երկրում սկզբնական կազմակերպությունների առկայությունը, անդամների քանակը եւ հսկայական կատարված աշխատանքը, որոնք, ինչպես միշտ, ապացուցում են, որ մենք վաստակել ենք մեր քվեները: Եվ ընդդիմությունում, եւ իշխանության մեջ մենք մշտապես գործել ենք մեր սկզբունքների եւ արժեքների համապատասխան. դատապարտելի երեւույթները դատապարտել ենք, դրականը դրական գնահատել: Եղել ենք բարեփոխումների համար պայքարող եւ նորարարության ջատագով՝ պահելով մեր քաղաքական գիծը եւ պայքարելով մեր ծրագրերի իրականացման համար:

Նույնը եւ այս ընտրությունների ընթացքում. հնչեցրել ենք քննադատություն եւ առաջարկել ենք արմատական փոփոխություններ: Իսկ այն քաղաքական ուժերը, որոնք խոսում են այդ մասին, թող իրենց նայեն, տեսնեն իրենց անցած ճանապարհը, եւ թե իրենք որտե՞ղ են ու ի՞նչ են անում: ՕԵԿ-ը հանդիսանալով ՀՀ առավել ակտիվ եւ կոնկրետ գործ կատարող քաղաքական ուժերից՝ եւ օրինաստեղծ, եւ գործադիր դաշտում մշտապես լայնածավալ աշխատանք է իրականացրել՝ ելնելով երկրի անվտանգության ու սոցիալական պաշտպանության հրամայականներից: Վերջին 20 տարիների ընթացքում կուսակցությունը կայուն ներկայացված է եղել խորհրդարանում, ինչը փաստում է մեզ հավատարիմ ընտրազանգվածի կայուն եւ հստակ գոյության եւ այն մասին, որ հասարակությունը բարձր է գնահատում կուսակցության գործունեությունը եւ օրենսդիրում, եւ գործադիրում: Ավելի քան 200 օրենքներ ենք հեղինակել, բարեփոխումներ ենք իրականացրել: Սա է ՕԵԿ-ը, եւ մենք պատասխան ենք տալիս մեր ժողովրդի եւ Աստծո առաջ եւ ոչ թե ինչ-որ չարակամների:

- ՕԵԿ-ում գո՞հ են ընտրությունների արդյունքներից, եթե նկատի ունենանք ներկայացված կուսակցականների պաշտոնական թիվը եւ ՕԵԿ-ի ստացած ձայները:

- Խնդիրներ կան: Մեր ստացած ձայներն ավելի քիչ էին, քան անդամները, քանի որ շատ մարդիկ տուրք տվեցին ընտրակաշառքներին: Ելնելով այս իրականությունից՝ մենք նախաձեռնել ենք ներկուսակցական լուրջ փոփոխություններ, խստացնելու ենք անդամակցության կարգը եւ ձեւակերպելու հետագա կառուցվածքային զարգացման ռազմավարությունը: Նույնիսկ արեւմտյան ժողովրդավարական երկրներում քաղաքական ուժը կենդանի, գործող օրգանիզմ է եւ զարգացման ու բարեփոխումների կարիք է ունենում, իհարկե՝ ռացիոնալության շրջանակներում: Մենք այս խնդրով զբաղվում ենք: Արձագանքները կտեսնեք:

- Ինչպե՞ս կգնահատեք ԲՀԿ-ի դիրքորոշումը. քաղաքական դաշտում հիմա մի իրավիճակ է, որ զարգացումները, կարծես, ԲՀԿ-ի մոտեցումներով են պայմանավորված:

- Ես չէի ասի, թե զարգացումների ընթացքը պայմանավորվում է ԲՀԿ-ի մոտեցումներով: Ուղղակի իրենք պետք է ընդունեն իրենց որոշումները: Բոլորիս խնդիրն այսօր մեր երկրի պաշտպանությունն է, կայունությունը եւ հետագա զարգացումը, այն դեպքում, երբ տեսնում ենք, որ աշխարհում զարգացման բավականաչափ անբարենպաստ պայմաններ են ստեղծվում նույնիսկ տնտեսապես առավել հզոր երկրների համար:

- Իսկ այն, ինչը տեղի է ունենում այսօր ՀԱԿ-ում, Ձեզ ուրախացնո՞ւմ է, ոգեւորո՞ւմ է, թե՞ տխրեցնում՝ նկատի ունենալով 2008-ին եւ դրանից հետո ՀԱԿ-ի եւ ՕԵԿ-ի փոխադարձ «հաճոյախոսությունները»:

- Ոչ ուրախացնում է, ոչ տխրեցնում: Ես այդ ամենին նայում եմ բավականաչափ ռացիոնալ: Տեղի է ունենում այն, ինչը որ պետք է տեղի ունենար: Յուրաքանչյուր քաղաքական ուժ, երբ ընդունում է իր ռազմավարությունը, պետք է պատկերացնի, թե դրա հետեւանքն ինչ է լինելու: Սա իրենց մոտեցումների, նաեւ քաղաքական գործընթացների տրամաբանության արդյունքն է եւ բնականոն գործընթաց է:

Երբ 2008-ին ՕԵԿ-ն իր դիրքորոշումը պարզ եւ հստակ արտահայտեց՝ ելնելով երկրի ազգային կենսական շահերից, անվտանգության ապահովման գերակայությունից, երկրում կայունություն պահպանելու հրամայականից, նույն ՀԱԿ-ը ՕԵԿ-ի մասին ինչ ասես՝ ասաց: Այնուհետեւ իրենք երեք տարի հետո ասացին նույնը, ինչ մինչ այդ հրապարակավ բարձրաձայնել էր ՕԵԿ-ը: Սա եւս մեկ անգամ ապացուցում է այն, որ մեր կուսակցությունը մշտապես իր գործունեության մեջ եղել է շիտակ, պաշտպանել երկրի շահերը եւ պարզ ու բաց նայել ժողովրդի աչքերին:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# «Այլատյացության քաջալերումն ուղղակի հարված է երկրի անվտանգությանը»

## Ասում է «Ժառանգության» մամուլի խոսնակ Հովսեփ Խուրշուդյանը

- Վերջերս DIY ակումբի հրկիզումից հետո լայն քննարկում է ծավալվել մամուլով եւ հեռուստատեսությամբ, ընդ որում, տարբեր քաղաքական ուժերի ներկայացուցիչներ եւս տվել են իրենց գնահատականները: Ինչպե՞ս կգնահատեիք տեղի ունեցած հրկիզումը եւ ընդդիմադիր ՀՅԴ-ի ու իշխող ՀՀԿ-ի մի շարք ներկայացուցիչների՝ դրան հետեւած քաջալերանքները՝ ուղղված այդ արարքը կատարած անձանց:

- DIY ակումբի հրդեհումը հակաօրինական արարք էր՝ ահաբեկչություն կամ խուլիգանություն (թող դատարանը դա որոշի) եւ պետք է պատժվի ՀՀ օրենքներին համապատասխան:

Ես չեմ անդրադառնա ՀՅԴ-ից եկած արձագանքներին, քանի որ դրանք հակասական են եւ իրարամերժ: Ինչ վերաբերում է ՀՀԿ-ին, ապա ինձ համար տարօրինակ չէ, որ այդ կուսակցությունում բավականին բարձր դիրքեր զբաղեցնող պաշտոնյաներ բացահայտ կամ քողարկված քաջալերում են այդ արարքն իրականացնողներին՝ համեմելով դա այլատյաց արտահայտություններով՝ ՀՀ քաղաքացիների մի հատվածի հանդեպ: Մի կողմից՝ մեծ է ցանկությունը շեղել հասարակության ուշադրությունը խայտառակ ընտրություններից եւ բազմաթիվ այլ խնդիրներից, որի համար իշխող կոալիցիան ուղղակի պատասխանատվություն է կրում, մյուս կողմից էլ՝ ՀՀԿ-ն մեկ անգամ չէ, որ ցույց է տվել, որ չի հարգում իր իսկ ընդունած օրենքները: Իրենց ասածներում նաեւ հակասություն կա 2008-ի դեկտեմբերին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայում ներկայացված «Սեռական կողմնորոշման եւ գենդերային ինքնության մասին ՄԱԿ-ի հռչակագրի» հետ, որի տակ ստորագրել է նաեւ Հայաստանի իշխանությունների կողմից նշանակված ներկայացուցիչը (այդ հռչակագրում ասվում է. «Մենք դատապարտում ենք մարդու իրավունքների ոտնահարումը՝ հիմնված սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության վրա, որտեղ էլ այն տեղի ունենա... Մենք կոչ ենք անում պետություններին ապահովել սեռական կողմնորոշման եւ գենդերային ինքնության հիմքով կատարված մարդու իրավունքների ոտնահարումների հետաքննությունը, իսկ մեղավորներին պատասխանատվության կանչել եւ հանձնել դատարանին»,- «Առավոտ»):

Քաղաքացիների հանդեպ խտրական վերաբերմունքը արգելված է նաեւ ՀՀ օրենքներով եւ իրենց իսկ առաջարկած եւ այսօր գործող Սահմանադրությամբ: Մյուս կողմից՝ կարծում եմ, որ եթե իրենց նպատակը ոչ թե պոպուլիզմին տուրք տալը լիներ, այլ իրենք անկեղծորեն համարեին, որ այդ օրենքները «պղծում են հայերիս ազգային նկարագիրը», կամ «մեզանից քաղաքացիներ են խլում, հայ մարդուն են այլասերում», ապա կամ ժամանակին դեմ կլինեին նման օրենքների ընդունմանը, կամ էլ վաղուց համապատասխան օրենսդրական



փոփոխությունների նախաձեռնություններով հանդես կգային իրենց դակիչը հանդիսացող Ազգային ժողովում: Ձեռքի հետ էլ համահունչ նախաձեռնություններով հանդես կգային ԵԺԿ-ի կանոնադրության մեջ եւ հիմնադիր այլ փաստաթղթերում փոփոխություններ կատարելու ուղղությամբ, որի դիտորդ անդամ դարձավ այս տարվա փետրվարին ՀՀԿ-ն:

- Ձեր կարծիքով՝ ինչի՞ կարող է բերել ծավալված քննարկումը:

- Կարծում եմ՝ իշխանությունները պետք է վերջ տան անառողջ հետաքրքրասիրությանը այլոց սեռական կյանքի կամ հավատքի հանդեպ եւ զբաղվեն իրենց ուղիղ պարտականություններով: Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի, ով հարգում է երկրի Սահմանադրությունը, կատարում է օրենքներով իր վրա դրված պարտականությունները, կարող է նաեւ լիարժեքորեն օգտվել նույն այդ օրենքներով իրեն տրված իրավունքներից, այդ թվում՝ անձնական կյանքի գաղտնիությունից եւ անձեռնմխելիությունից: Իսկ նրանք, ովքեր քաջալերում են հակաօրինական արարքները եւ ցանկացած տիպի այլատյացություն՝ ուղղակիորեն հարված են հասցնում ոչ միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիների սահմանադրական ազատություններին, քաղաքացիական համերաշխությանն ու ազգային միասնությանը, այլեւ մեր երկրի միջազգային հեղինակությանն ու անվտանգությանը:

ԱՆՆԱ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

# «Ո՞վ է տեսել, որ 2-3 կաթ հավաքողներ իրենց գինը թելադրեն գյուղացիներին»

## Զայրանում է Հարթաշենի գյուղապետ Գրիշա Գալստյանը

Երեկ Գյումրու ժուռնալիստների «Աստարեզ» ակումբում Աշոցքի տարածաշրջանի Հարթաշեն համայնքի ղեկավար Գրիշա Գալստյանը գյուղացիների անունից ճամուլի ասուլիս էր հրավիրել՝ նեղսրտելով, որ մթերող կազմակերպությունները գյուղացիներին ճորտի տեղ են դրել՝ նախկին 150 դրամի փոխարեն մեկ լիտր կաթը գնելով 120-130 դրամով: Ըստ գյուղապետի՝ իրենք կաթը մատակարարում են Մուսայելյանի ու Ազատյանի կաթի գործարաններին: «Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողով կա, թող տեր լինեն կաթի գներին, ինչո՞ւ են մթերող կազմակերպությունները քմահաճորեն իջեցնում կաթի գինը, երբ ցանկանում են՝ իջեցնում են, ու ոչ մեկը ձայն չի հանում, գյուղացին էլ անճարակ է, անպաշտպան, ստիպված կաթը տալիս է: Երկու ամիս առաջ գյուղացիներից կաթը ձեռք էին բերում 150 դրամով, հիմա ինչի՞ դարձավ 120-130 դրամ: Պատճառաբանում են, թե կաթի գինն է իջել շուկայում, պանրի գինն էլ է իջել, բայց էսօր շուկայում «Լոռի» պանիրը 2200 դրամ է, կաթն էլ՝ 350 դրամ, էդ ինչպե՞ս եղավ, որ կաթը դու ինձանից 120 դրամով տանում ու խանութում 350 դրամով ես վաճառում»:

Գյուղապետի նախազգուշացմամբ՝ եթե այսպես շարունակվի, ապա գյուղացիները կհրաժարվեն անասուններ պահելուց, կվաճառեն ու կլքեն հայրենիքը: Ըստ նրա՝ գյուղացին հսկայական աշխատանք է կատարում կաթ արտադրելու համար, սակայն այլ տարբերակ չունենալով՝ էժան գնով վաճառում է: «Ո՞վ է տեսել՝ կաթ մթերողը իր գինը թելադրի արտադրողին, աշխարհի բոլոր երկրներում արտադրողն է իր կամքը թելադրում, իսկ մեզ մոտ 2-3 հոգի կաթ հավաքողներ իրենց կամքն են թելադրում: 2



ամիս առաջ գյուղնախարարն էր եկել մեր մարզ, խորհրդակցություն անցկացրեց գյուղապետերի հետ ու անհիմն հայտարարություն արեց, թե գյուղապետերը համագործակցում են մթերողների հետ, այդ պատճառով էլ կաթի գները ընկնում են, մեղքը գյուղապետերինն է, բայց ո՞րն է իմ մեղքի բաժինը: Ինքը չհիմնավորեց, թե ինչպես է գյուղապետը համագործակցում մթերող կազմակերպության հետ. դա հնարավոր բան չէ»,- զայրացավ գյուղապետը: «Առավոտը» հետաքրքրվեց, թե հարթաշենցիների արտադրած կաթը արդյոք համապատասխանո՞ւմ է սանիտարահիգիենիկ նորմերին, այս տարածքի գյուղացիները հետեւո՞ւմ են վարչապետի խորհուրդներին եւ լավ լվանո՞ւմ են կովերի պտուկները, հետո կթում: «Ասֆալտի վրա ման եկողը թող գյուղացու համար օրենք չընդունի, գյուղացին ավելի լավ գիտի՝ կովին ինչպես նայի ու կթի, քան Երեւան քաղաքում նստած գյուղնախարարը կամ գյուղնախարարի վարչության պետերը, նրանք կովից ի՞նչ են հասկանում»,- դարձյալ բորբոքվեց գյուղապետը՝ շեշտելով, որ դա անհնեւին չի կարող ազդել գնի վրա: Մեր մյուս հարցին էլ, թե վերջին անգամ վարչապետը կամ կառավարության այլ բարձրաստիճան պաշտոնյա ե՞րբ են այցելել Հարթաշեն, գյուղապետը երկար մտածեց ու նման մեկ դեպք չհիշեց: Այն հարցին էլ, թե ձեւական խոսքե՞ր են, որ ամեն անգամ ասում են՝ դեմքով շուռ ենք եկել դեպի գյուղացին, գյուղապետը այսպես արձագանքեց. «Չէ, շուռ են եկել, գյուղացուն օգնում են, վառելիք են տվել, վարկեր են տալիս, իմ բողոքը հո կառավարության դեմ չէ, այլ կաթ մթերողների դեմ է, թող մի քիչ վարչապետը տեր լինի: Եթե կաթի գինը կարգավորեն, գյուղացին 5 անասունի փոխարեն 10 կպահի ու իր երկիրը չի լքի»:

Մենք այս հարցի շուրջ պարզաբանումներ խնդրեցինք նաեւ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովից:

«Խնդիրը ամբողջությամբ գյուղնախարարության դաշտում է, բայց մենք վարչապետի հանձնարարականով որպես աջակցող մարմին վերլուծություններ ենք կատարել ու ուղարկել թե՛ կառավարություն ու թե՛ գյուղնախարարություն: Այստեղ որեւէ մրցակցային խնդիր, մասնավորապես հակամրցակցային պայմանավորվածություններ կամ մրցակցության սահմանափակումներ չենք հայտնաբերել: Մեկ ամիս շարունակ Շիրակի փոխմարզպետ պարոն Արշակյանի հետ միասին հանդիպել ենք մի շարք համայնքների ղեկավարների, գյուղացիների ու կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող տնտեսվարողների հետ: Մենք խոշոր տնտեսվարողներից հաշվետվություններ ենք պահանջում՝ վերահսկելու, որ անհիմն գնային փոփոխություններ չլինեն»,- ասացին հանձնաժողովից:

ՆՈՒՆԵ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

## Համակարգվեց Արարատյան ջրատարի եւ բաշխիչ ցանցի գործունեությունը

Ինչպես արդեն հայտարարվել է, վերջին տարիներին լեռնային աղբյուրներից հոսող բարձրորակ ջրերի արդյունավետ օգտագործման ու բաշխիչ ցանցի վերակառուցման շնորհիվ ապրիլից դադարեցվել է Արարատյան դաշտի արտեզյան ջրերի մատակարարումը մայրաքաղաքին: Սակայն «Արարատյան» պոմպակայանը եւ այնտեղից դեպի Երեւան ձգվող 5 մայրուղային ջրատարները շարունակում են գտնվել աշխատանքային վիճակում՝ պատրաստ ցանկացած պահի, մասնավորապես, արտակարգ իրավիճակներում վերսկսել Էրեբունի, Շենգավիթ ու Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների ջրամատակարարումը:

Իսկ օրերս Երեւանի ՋԷԿ-ին հարակից երեք վայրերում միաժամանակ «Երեւան Ջուր» ՓԲԸ-ն իրականացրեց խոշորածավալ աշխատանքներ «Արարատյան-Երեւան» ջրատարների եւ մայրաքաղաքի բաշխիչ ցանցի վերջնական համակարգման եւ գործունեության կոորդինացման նպատակով:

Այսպես, նախկինում «Մսի կոմբինատ» օրվա կարգավորիչ ջրամբարը (ՕԿՋ) միաժամանակ երկու տեղից էր սնուցվում՝ Գառնիի ջրաղբյուրից եւ Արարատյան դաշտից: Ընդ որում, Արարատյան դաշտի ջուրը նա ստանում էր մի խողովակով, իսկ զուգահեռ՝



մյուսով ուղղում դեպի բաշխիչ ցանց: Ներկայումս Արարատյան ջրատարի անհրաժեշտությունն այլեւս չկա: Մինչդեռ դեպի ՕԿՋ ձգվող մոտ 3 կմ երկարությամբ խողովակը վաղուց ի վեր խիստ վթարված էր ու վայրկյանում 30-40 լիտր ջրի կորուստ ուներ: Ահա թե ինչու որոշում ընդունվեց վթարված խողովակն ընդհանրապես խցափակել երկու կողմից, դրանից 1000 մմ տրամագծով միացում տալ դեպի մյուս ջրատարը: Այսուհետ անհրաժեշտության դեպքում (եթե Գառնիի ջրատարը կանգառնի, կամ քաղաքում ջուրը չբավականացնի) Արարատյան դաշտի ջուրը բաշխիչ ցանց կտրվի ուղղակիորեն, իսկ դրա ավելցուկը կարող է նույն խողովակով բարձրանալ վեր եւ ամբարվել ՕԿՋ-ում:

Դրանից բացի, Արարատյան ջրատարի սկզբնամասում կառուցվեց ջրաբաշխիչ հանգույց եւ տեղադրվեց հակադարձ փական: Այն ավտոմատ կերպով բացվելու է արտեզյան ջրերի մատակարարման դեպքում, իսկ դադարեցման դեպքում՝ փակվելու, որպեսզի բացառվի ջրի արտահոսքը քաղաքից դեպի Արարատյան դաշտ ու պահպանվի հավասարակշռությունը բաշխիչ ցանցում:

### Զեյթունում շահագործումից հանվեց մոտ 500 մ ջրագիծ

Մայիսի 21-ին Զեյթունում Մյասնիկյան պողոտայի, Էմինեսկու 1 եւ 2 փողոցների, Գոգոլ փողոցի 3, 5, 5/1, 7, 9 շենքերի եւ 1-90 առանձնատների, Ռայնիսի, Նորաշխարհյան, Գերցենի, Բուսաբանական, Շովրոյան, Ռուբինյանց եւ Պ. Սեւակի փողոցների, «Արագած» սրճիչի ֆաբրիկայի, «Երեւան Սիթի» առեւտրի կենտրոնի եւ հարակից տարածքների ջրամատակարարման ընդհատման պատճառը, ըստ «Երեւան Ջուր» ՓԲԸ «Զեյթուն» շահագործման տեղամասի գլխավոր ճարտարագետ Գրիգոր Գեւորգյանի, ջրագծի ապամոնտաժման աշխատանքներն էին:

Տրված պարզաբանման համաձայն՝ Սեւակ-Ռուբինյանց փողոցների խաչմերուկից մինչեւ «Ալմազ» գործարան ժամանակին կառուցվել էր 2 խողովակաշար՝ 300 մմ եւ 500 մմ տրամագծով: Ուսումնասիրությունները ցույց էին տվել, որ 300 մմ ջրատարը գտնվում է վթարային վիճակում, ինչը հոսակորուստների էր հանգեցնում եւ խոչընդոտում տարածքում կայուն ջրամատակարարումը: Մինչդեռ 500 մմ ջրագիծը ոչ միայն տեխնիկապես լավ վիճակում էր, այլեւ օգտագործվում էր մասնակի թողունակությամբ: Այստեղից էլ ընդունված որոշումը՝ ապամոնտաժել 300 մմ խողովակը, իսկ սպառողներին ջուր մատակարարել 500 մմ խողովակով:

Հաղորդակցության բաժին

### Աջափնյակի մի քանի փողոց կջրազրկվի

«Երեւան Ջուր» ընկերությունը տեղեկացնում է իր հաճախորդներին եւ սպառողներին, որ, վերանորոգման աշխատանքների հետ կապված, ս.թ. մայիսի 23-ին, ժամը 10.00-22.00-ը կդադարեցվի Աջափնյակ վարչական շրջանի Շիրազ, Մազմանյան, Մարգարյան եւ Բաշինջաղյան փողոցների՝ իրենց նրբանցքներով, եւ հարակից տարածքների ջրամատակարարումը:

Ընկերությունը հայցում է սպառողների ներողամտությունը պատճառված անհանգստության համար եւ կանխավ շնորհակալություն հայտնում ըմբռնման համար:

«Երեւան Ջուր» ՓԲԸ

# Թուրքիայից ծաղիկներ էլ չենք ընդունում

Օրերս բնապահպանները խիստ մտահոգություն հայտնեցին, որ գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմները, որոնք արդեն Հայաստան էլ են ներթափանցել, սպառնում են հայի գենոֆոնդին: Երեկ «Էրեբունի պլազա» հյուրանոցի նիստերի դահլիճում ՀՀ սննդամթերքի անվտանգության ոլորտի զարգացման ռազմավարության եւ գործողությունների վերաբերյալ սեմինարի ժամանակ «Առավոտը» Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետ Աբրամ Բախշագուլյանից հետաքրքրվեց, թե ուսումնասիրություն ունե՞ն՝ այսօր մեր սննդի քանի՞ տոկոսն է գենետիկորեն ձեւափոխված:

Ծառայության պետն ասաց, որ դա ոչ թե իրենց, այլ գիտնականների խնդիրն է, իսկ իրենց գործը վերահսկելն է: Հետաքրքրվեցինք, թե այդ դեպքում ինչպես են ստուգելու՝ այս կամ այն սնունդը պարունակո՞ւմ է գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմներ, եթե գիտնականների հետ չեն համագործակցում: Պարոն Բախշագուլյանն ասաց. «Ներկայումս ուսումնասիրում ենք, բայց մենք առայժմ վիճակագրություն չունենք: Բացի այդ, պետական վերահսկողությունը սննդում առկա գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների եւ միկրոօրգանիզմների նկատմամբ օրենքում բացակայում է: Վարչապետի մոտ խորհրդակցության ժամանակ այդ հարցերը քննարկվել են: Սննդամթերքի վրա պետք է մակնշվի, որպեսզի սպառողն իմանա՝ մոդիֆիկացված է, թե ոչ»:

Ինչ վերաբերում է հայկական շուկայում հայտնված թուրքական լոլիկին, ծառայության պետը վստահեցրեց, որ այդ լոլիկները ոչ թե թուրքական, այլ հունական են եղել. «Թուրքական ծագման փաստաթղթով ՀՀ սննդամթերք չի ներկրվել: Հայտնաբերման դեպքում տեղում արգելվում է ներկրումը: Անցյալ տարի մենք արգելել ենք ծաղկի ներկրումը Թուրքիայից: Պետք է կարողանանք իդենտիֆիկացիա իրականացնել թուրքական արտադրանքի վրա: Բայց քանի որ մենք չունենք դիվանագիտական հարաբերություններ Թուրքիայի հետ, չունենք իդենտիֆիկացիոն խնդիր»:

Սեմինարի ժամանակ հայաստանյան պաշտոնյաները, որոնք պատասխանատու են սննդի անվտանգության համար, Եվրամիության ներկայացուցիչներին վստահեցրին, որ իրենք ջանք ու եռանդ չեն խնայում, որպեսզի մեր երկրի սննդամթերքի անվտանգության ռազմավարությունը համապատասխանեցնեն Եվրամիության պահանջներին: Նրանց խոսքերով՝ ռազմավարության նպատակն է նվազագույնի հասցնել Հայաստանի ֆերմերային համայնքի, ինչպես նաեւ ագրոբիզնեսի ներկայացուցիչների վարչական բեռը՝ թարմացնելով գոյություն ունեցող կանոնակարգերը եւ հրաժարվելով հնացած ստանդարտներից:

ԼՈՒՍԻՆԵ ԲՈՒԴԱՂՅԱՆ

Առավոտ aravot daily
ԵՐԵՔՇԱԲԹԻ 22.05.2012

# Հաքեր Ավանեսով. լեգե՞նդ, թե՞ իրականություն

Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում, դատավոր Արմեն Խաչատրյանի նախագահությամբ, ավարտվեց հայրենի դատական պրակտիկայում նախադեպը չունեցող մի դատավարություն: Առաջին անգամ լսվում էր համակարգչային հաքերի դեմ հարուցված քրեական գործ, որին խառնված էին այլ պետություններ էլ՝ իրենց հատուկ ծառայություններով:

27-ամյա Գեորգի Ավանեսովը մեղադրվել էր ՀՀ քրօրի 252-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 253-րդ հոդվածի 3-րդ մասով, 254-րդ հոդվածի 1-ին մասով, 255-րդ հոդվածով եւ 256-րդ հոդվածի 1-ին մասով: Դատարանը 3 հոդվածների նկատմամբ կիրառեց համաներում, իսկ համակարգչային սաբոտաժի համար Ավանեսովին դատապարտեց 4 տարվա ազատազրկման:

Գ. Ավանեսովը, ըստ մեղադրանքը պաշտպանող դատախազներ Հովսեփ Սարգսյանի եւ Գրիգոր Տիգրանյանի, 2009թ մարտից մինչեւ հունիսն ընկած ժամանակահատվածում, գտնվելով Հայաստանի տարածքում, մշակել է համացանցից օգտվողների համակարգիչները վարակելու համար նախատեսված հատուկ հարուցիչ՝ տուժողների համակարգիչների եւ համակարգչային համակարգերի հնարավորությունները օգտագործելու եւ դրանց մեջ պահվող տեղեկատվությանն առանց թույլտվության տիրանալու եւ տնօրինելու, այդ թվում՝ ցանկության դեպքում ոչնչացնելու, ուղեփակելու, վերափոխելու, պատճենահանելու նպատակով:

Այնուհետեւ վերոհիշյալ համակարգչային հատուկ հարուցիչը զոհերի համակարգիչների մեջ գաղտնի ներբեռնելու եւ հետագայում վերջիններիս պաշտպանված համակարգչային տեղեկատվություն ապօրինի մուտք գործելու համար ձեռք է բերել հատուկ ծրագրային միջոցներ, նախատեսված կայքի օրինական համակարգողի սահմանած սահմանափակումները շրջանցելու եւ առանց վերջինիս թույլտվության եւ իմացության՝ կայք մուտք գործելու համար, որից հետո ապօրինի եւ գաղտնի մուտք գործելով խոցելի համացանցային կայքեր՝ առանց դրանց օրինական համակարգողների թույլտվության՝ փաստացի տիրացել է այնտեղ պահվող տեղեկատվությանը եւ ցանկության դեպքում փոփոխել է այնտեղ պահվող տեղեկատվությունը, ինչն արտահայտվել է այդ կայքեր անխափան ներթափանցելու համար նախատեսված «ետնամուտք» ստեղծելու կամ այնտեղ պատրաստված հատուկ ծրագրային միջոցներ գաղտնի տեղադրելու եղանակով:



Մեղադրանքի կողմի 25 էջանոց ճառում արձանագրվել էր, որ «համացանցից օգտվող անձինք, այցելելով համապատասխան կայքեր, առանց իմանալու ներբեռնել են ստեղծված հարուցիչն իրենց համակարգչի մեջ»:

Նշվում էր 194 կայքերի մասին, ուր ներթափանցել էր Ավանեսովը:

Գեորգի Ավանեսովը ներթափանցել էր նաեւ Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության միջազգային հարաբերությունների ինստիտուտի կայքը, փոփոխել է կայքում պահվող տեղեկատվությունը՝ տեղադրելով օրիորդի լուսանկարով ֆայլը:

Գեորգի Ավանեսովը, օգտագործելով պաշտպանված համակարգչային տեղեկատվություն ապօրինի մուտք գործելու համար նախատեսված հատուկ ծրագրային միջոցները, ներթափանցել էր նաեւ «Ռուսաստանյան մշակույթի ֆոնդ» ոչ առեւտրային կազմակերպության culture ru» կայքը: Հատուկ ծրագրային միջոցների համացանցում ներդրման արդյունքում Գեորգի Ավանեսովը ստեղծել է վարակված համակարգչային ցանց «Bredolab» անվանումով բոտնետ, դրա կառավարման համար օգտագործել է Նիդեռլանդների Թագավորությունում գործող «Lease Web» հոսթինգ պրովայդերի եւ Ֆրանսիայում գործող «OVH» պրովայդերի կողմից սպասարկվող սերվերները:

Անդրազգային հանցագործության մեջ մեղադրվողը 2009թ հունիսից առ 2010թ հոկտեմբերի 26-ն ընկած ժամանակահատվածում ամբողջ աշխարհում 52 989 593 դեպքով տարածել է 16 ձեւատեսակի 341 հատ տարբեր հատուկ հարուցիչներ, սերվերներից մեկի տվյալների հենքում կուտակել է 19851 հատ FTP-սերվերների անվանումներ, մուտքանուններ եւ գաղտնաբառեր, որն «առաջացրել է ծանր հետեւանքներ»: Դատարանում համակարգչային հսկան փորձում էր հասկանալ, թե ինչպես է դրսեւորվել այդ ծանր հետեւանքը:

Նախաքննության ժամանակ Գ. Ավանեսովը հայտնել էր, թե «այդ համակարգչային ծրագիրն ինքը 2009թ հունիս ամսին համացանցի միջոցով փոխանցել է մի անձնավորության, որի հետ շփվել է համացանցի միջոցով եւ նրա հետագա գործողությունների մասին տեղյակ չի եղել: Այդ անձնավորության կենսորոշիչ տվյալները՝ անուն-ազգանունը, հասցեն, հեռախոսը չի իմացել, նրան ճանաչել է միայն համացանցային կեղծանունով եւ ICQ-համարով, որոնք մոռացել է»:

Գ. Ավանեսովը աշխատել է ակումբներում որպես դիջեյ, աշխատանքում եւ տարբեր ինտերնետային սոցիալական ցանցերում օգտագործել է PDQ, «Padonaque», «Atata», «Ժորա Պերլով» եւ «Մաքս Պերլով» ստեղծագործական կեղծանունները:

Հայ տուժողների՝ Էդուարդ Պողոսյանի, «Արմինե Գրիգորյան» ԱՁ կոմերցիոն գծով տնօրեն Արտյոմ Գաբրիելյանի, Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան պետական ոչ առեւտրային կազմակերպության ներկայացուցիչ, ինֆորմացիոն եւ հաղորդակցության տեխնոլոգիաների բաժնի պետ Միքայել Առաքելյանի ցուցմունքներից պարզ դարձավ, որ նրանք չեն ճանաչել Գ. Ավանեսովին:

Գլխավոր տուժողը՝ «Կասպերսկու լաբորատորիա» ՓԲ ընկերության փորձագիտական-վերլուծական բաժնի ղեկավար Գրիգորի Անուֆրիեւի ցուցմունքներով 2010թ. սեպտեմբերի 30-ից մինչեւ հոկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում իրականացվել է «DDoS»-հարձակում:

«2010 թվականի սեպտեմբերի 30-ին՝ ժամը 17:57: 02-ին ֆիքսվել է հանգույցի մուտքերի սկանավորման փորձ 95 211 7 144 IP-հասցեից, գրանցված «Leaseweb» պրովայդերի անվամբ: Տվյալ հանգույցից մուտքն արգելափակվել է 2010 թվականի հոկտեմբերի 1-ի ժամը 11:32-ից:

Պարզվել է, որ հարձակման երթեւեկն իրենից ներկայացրել է 200 փաթեթներից բաղկացած հաջորդականություններ: 2010 թվականի հոկտեմբերի 1-ին, ժամը 13: 52-ից սկսվել է «DDoS»-հարձակումը: Սկանավորման փորձը նկատելուց հետո իրենք արգելափակել են վնասաբեր հարուցիչների մուտքը: Դրա հետ մեկտեղ նկատվել է, որ իրենց 80 մեգաբիտ ծավալով ալիք տրամադրող պրովայդերի՝ «Մակոմնետ» ՓԲԸ կողմից համացանցային ծառայությունների մատուցման աստիճանային անկում»:

«Կասպերսկու լաբորատորիա» ՓԲԸ հանդեպ իրականացված հարձակման արդյունքում նրանց ընդունած երթեւեկը մի քանի անգամ գերազանցել է տրամադրած ալիքի հնարավորությունը, ինչը բերել է պրովայդերի ցանցային սարքավորումների ծանրաբեռնվածությանը:

Նիդեռլանդների Թագավորության ոստիկանության ազգային կորպուսի ազգային հետախուզության ծառայության բարձր տեխնոլոգիաների ոլորտի հանցագործություններով զբաղվող աշխատախմբի կողմից տեղեկացվել են, որ իրենց համակարգիչները վարակվել են վնասաբեր ծրագրով, ինչի հետեւանքով այն ընդգրկվել է հանցավոր բոտնետում, որից հետո խնդրել են պարզել իրենց տեղեկատվական համակարգ ներխուժող անձին եւ օրենքի սահմաններում նրա հանդեպ քրեական հետապնդում իրականացնել:

«Մեղադրանք մարդուն կարելի է առաջադրել միայն փաստացի կատարած արարքի համար, այլ ոչ թե ենթադրաբար, հնարավոր հանցագործությունը կանխելու նպատակով: Խիստ կարեւորվում է հանցակազմի դիսպոզիցիայի պարտադիր հատկանիշի ոչ միայն ծանր հետեւանք առաջացնելը, այլեւ այդ հետեւանքների առաջացումը ուղղակի դիտավորությամբ: Գ. Ավանեսովը չի ճանաչել որեւէ մեկին, դիտավորությամբ որեւէ մեկին վնաս տալու ցանկություն չի ունեցել»,- ասում է Գ. Ավանեսովի պաշտպանը՝ ՀՀ փաստաբանների պալատի անդամ Գեղամ Հակոբյանը:

Գ. Ավանեսովն ունի խնամքի տակ մի հիվանդ մայր, ունի բարձրագույն կրթություն, ամուսնացած չէ:

ՌՈՒԶԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ

# Դանակահարությունից սպանվեց ազատամարտիկ որդիս

Շատ մեծ ցավ եմ ապրում այս մասին հանրությանը տեղեկացնելով, բայց ամաչել ու չասել այն, ինչ կատարվել է, չեմ կարող, քանի որ հետո գուցե ինձ մեղադրեմ, ասելով՝ գուցե գտնվեին մարդիկ, որոնք սիրտ ու հոգի ունեն, որոնք գիտակցում են պահի կարեւորությունը:

18.11.2011թ.-ին վիճաբանության ընթացքում 7 տեղից դանակահարեցին որդուս. 6-ը ոտքի շրջանում՝ կտրել-ծակելով ոտքի գլխավոր արյունատար անոթը եւ 1-ը՝ ձեռքի, որի հետեւանքով արյան մեծ կորստից եւ ծանր վնասվածքից որդիս զրկվեց կյանքից…

Որդիս «Վարդանանք երդվյալ ջոկատի» հիմնադիր հրամանատարն էր, ինչպես նաեւ 114 գումարտակի Վանյա Գալստյանի զավակը: Նա 36 տարեկանում կարիքից դրդված ընդունվեց աշխատանքի՝ որպես տաքսու վարորդ «Վալենտին» տաքսի ծառայությունում եւ սկսեց վարել «Լինքոլն» մակնիշի ավտոմեքենա: Աշխատում էր ջանասիրաբար: Նրա հետ էր աշխատում եւ նույն մեքենայից էր վարում նաեւ Միքայելը, որի եղբայրը կահույքի արտադրամաս էր վարձակալել եւ օգտվում էր «Վալենտին» տաքսի- սերվիսից: Փոքր ծավալի ապրանք տեղափոխելիս մինչեւ դեպքի օրը մեկ անգամ տղաս հրաժարվում է իր մեքենայով ապրանք տեղափոխելուց:

Մի քանի օր անց կրկին որդուս ուղարկում են նույն կահույքի արտադրամասը պատվերի եւ կրկին Գալուստը հրաժարվում է պատվերից: Այդ ժամանակ Միքայելի եղբայրը՝ Վլադիմիրը, զանգում է «Վալենտին» տաքսի-սերվիսի հեռախոսավարուհուն՝ Սոնային, տալիս բազում հայհոյանքներ որդուս հասցեին, իսկ Սոնան, որը որդուս հետ շատ լավ հարաբերություններ ուներ, նույնությամբ փոխանցում է նրան, եւ այս ամենից վիրավորվում է որդուս ինքնասիրությունը: Գալուստը 17.11. 2011թ. Էրեբունու տարածքում հանդիպում է Միքայելին, թեթեւակի վիճաբանություն է լինում, որի արդյունքում հրում է որդուս ու կոտրում է նրա վարած մեքենայի հայելին, որն էլ ավելի է զայրացնում տղային եւ պայմանավորվում են հանդիպել ավելի ուշ ժամի…

18.11.2011թ. գիշերը, ժամը 1: 30-ի սահմաններում, հանդիպման են գալիս Միքայել եւ Վլադիմիր եղբայրները իրենց 3 ընկերների հետ միասին, իսկ որդիս գնում է եղբոր եւ հարեւանի հետ միասին: Հանդիպման ժամանակ նրանք հասկանում են միմյանց: Միքայելը եւ մեր հարեւանն առանձնանում են եւ նկատում են իրարանցում, այդ ժամանակ բռունցքով Վլադիմիրը հարվածում է որդուս բերանին եւ առաջանում է վիճաբանություն. իբր այդ խառնաշփոթի ժամանակ որդիս վերցնում է մեքենայի անիվ փոխելու բանալին եւ հարվածում է Հակոբին եւ Միքայելին՝ պատճառելով ոչ լուրջ վնասվածք եւ էլ ավելի շատ վնասվածքներ է ստանում որդիս, ինչն էլ ձեւակերպված է՝ «հնարավոր է վիճաբանության ընթացքում բարձրությունից վայր ընկնելու հետեւանք (մի փոքր փոսում գլորվել են ցած)»: Այդ ժամանակ Միքայելը բռնած է լինում որդուս ձեռքերը, իսկ Հակոբը գրպանից հանում է եւ հարվածում է իբր 4 անգամ, որը հետագայում պարզվում է՝ 7 անգամ (տես նաեւ՝ police.am 23.11.2011.tv-02 հաղորդումը):

Որդուս ճանաչում էին նաեւ «ՀԱԲ-ի Վանիկ» անունով, նա 2-րդ կարգի հաշմանդամ էր: 2004թ. վաճառել էինք մեր 1 սենյականոց բնակարանը՝ որոշ պարտքերի պատճառով, այդ ընթացքում դոլարի կուրսը ընկավ, իսկ բնակարանների գները բարձրացան: Հրամանատարը, որը պատվով վերադարձավ մարտից, որն առաջինն էր Հայաստանում եւ 1996թ. տոնեց Սուրբ Վարդանանց տոնը եւ նույն տարվա ապրիլի 7-ին Վարդան Մամիկոնյան արձանի փոքր հողակտորը ջոկատով մաքրեցին եւ հրամանատարի անձնական միջոցներով 451 հատ վարդ տնկեցին, սպանվեց հայի ձեռքով: Նրա վերջին միջոցառումը եղել է 178 դպրոցում, որտեղ ազատամարտիկների անուններով բացվեցին դասարաններ, իսկ այս տարի մտադրվել էինք տոնել վարդերի տնկման 10 տարին եւ ցուցանակ փակցնեինք, թե վարդերն ում կողմից են տնկվել, սակայն այս դաժան դեպքը կոտրեց մեզ եւ արդեն 8 տարի է՝ ապրում ենք վարձով:

Ամուսինս այս փառահեղ հաղթանակի համար դրել է մեր ողջ ունեցվածքը, ինչպես նաեւ իր առողջությունը, իսկ իմ որդին՝ Գալուստը, չօգտվելով իր սոցիալապես անապահովի կարգավիճակից, մարդատար տաքսի ավտոմեքենայով չտեղափոխեց արտադրանք ու մարդկանց բացատրեց, որ դա հակահիգիենիկ է, եւ այն հատուցեց կյանքով…

Թիվ 12140711 քրեական գործը գտնվում է ոստիկանության Էրեբունու քննչական վարչության քննիչ Բ. Եղիազարյանի վարույթում, ընթանում է աղավաղված, զգալի բացթողումներով, ցանկացողների համար կարող եմ անձամբ ներկայացնել: Շուրջ 6 ամիս քննվող գործն ավարտին հասցնելուց հետո ինձ հրավիրեց բաժին, ներկայացրեց գործի ողջ փաթեթը, որի համար էլ վճարեցի այնքան, որքան պահանջեցին…

Դիտավորյալ սպանության 104 հոդվածի 1-ին մասը փոխվել է 112. 2 հոդվածի 14-րդ կետով:

Ես ապրիլի 28-ին 10 աշխատանքային օրով վերցրեցի այդ գործի պատճենները, որպեսզի ծանոթանամ գործի բնույթին: Տրվածի մեջ բացակայում էին բազմաթիվ փաստաթղթեր, որոնց պատճենները ստանալու նպատակով գրեցի միջնորդություն մայիսի 5-ին, որից ելնելով էլ գործը, ըստ օրենքի, պետք է վերանայվի: Սակայն քննիչը, խախտելով օրենքը, առանց ինձ տեղյակ պահելու, նույն օրը գործն ուղարկեց դատարան, որի մասին ինձ տեղեկացրել է մայիսի 11-ին:

Այս պահին մեր ֆինանսական վիճակը չափից ավելի ծանր է, եւ խնդրում եմ այն մարդկանց, ովքեր կարող են իրավաբանորեն կամ փաստաբանական որեւէ աջակցություն ցուցաբերել, կանգնել հաղթանակած հրամանատարի կողքին, որ վերջապես ճիշտն ու արդարությունը հաղթի:

ԱՆԱՀԻՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Գալուստ Մելքոնյանի իրավահաջորդ

# «ԿԳՆ աշխատակազմի ղեկավարի որդու դիպլոմը «սարքովի» չէ»

## Հավաստիացնում է ԿԳՆ հանրակրթության վարչության պետը

Մայիսի 25-ին շուրջ 400000 աշակերտ կավարտի դպրոցը, որից 40000-ը 12-րդ դասարանցի է: Ընդ որում՝ Երեւանը կունենա 10000 շրջանավարտ: Վերջին զանգը կհնչի 1400 պետական եւ 50 մասնավոր դպրոցներում:

ՀՀ ԿԳ նախարարության հանրակրթության վարչության պետ Նարինե Հովհաննիսյանը երեկ «Հայելի» ակումբում, ի թիվս այլ հարցերի, խոսեց «վերջին զանգի-ց», դպրոցներում այդ առիթով սկսված դրամահավաքից ու ԿԳՆ «թեժ գծին» ստացված ահազանգերից: Նրա ասելով, «թեժ գիծը» նախորդ տարիների պես էլ չի «պայթում». ստացված ահազանգերը 3-4-ն են ու հիմնականում վերաբերում են ավարտական խնջույքների համար հավաքվող գումարներին:

Տիկին Հովհաննիսյանն անդրադարձավ շաբաթ օրն ամփոփված դպրոցական առարկայական օլիմպիադաներին:

Aravot.am-ը դժգոհություններ էր ստացել օլիմպիադաների մասնակից երեխաների ծնողներից, թե ԿԳ նախարարության աշխատակազմի ղեկավար Միեր Ղազարյանի որդու հաղթանակը սարքովի է: Այս «մասով» տիկին Հովհաննիսյանը Aravot.am-ին պարզաբանեց, որ ԿԳՆ աշխատակից հոր գործոնը երեխայի հաջողության մեջ դեր չի ունեցել եւ Դավիթ Ղազարյանը ոչ միայն այս տարի է քիմիայից եւ կենսաբանությունից առաջին կարգի դիպլոմներ ստացել, այլեւ անցյալ տարի հրաշալի արդյունքներ ցուցաբերել:



Անդրադարձ եղավ նաեւ Youtube-ում օրերս հայտնված այն աղմկահարույց տեսագրությանը, որտեղ բարձրդասարանցի աղջիկները տղամարդու նման հայհոյում են միմյանց ու ծեծում:

Տիկին Հովհաննիսյանն ասաց, որ, բարեբախտաբար, դա բացառիկ երեւույթ է, աշխատանքներ են տարվում այդ դպրոցը հայտնաբերելու ուղղությամբ: «Սրա համար միայն դպրոցի տնօրինությանը, դասղեկին կամ ԿԳ նախարարությանը մեղադրել չարժի, բոլորս ենք պատասխանատու, նաեւ ծնողները ու այն երեխաները, որոնք ծեծկռտուքի ժամանակ իրենց դասընկերների կողքին էին ու նկարում էին, այս ուղղությամբ մեծ անելիքներ կան»,- ասաց նա:

Հանրակրթության վարչության պետը հավելեց, որ ավագ դպրոցներում ԿԳ նախարարությունը իրականացնում է «Տեսուչը՝ դպրոցում» ծրագիրը: Մեր դիտարկմանը՝ մի՞թե արժի ոստիկան մտցնել դպրոց, որտեղ անչափահաս երեխաներ են սովորում ու թերեւս մանկավարժները անելիք ունեն ագրեսիայի դրսեւորումները դպրոցում կանխելու համար, տիկին Հովհաննիսյանը պատասխանեց, թե 11 դպրոցում են եղել, եւ երեխաները այդ ամենին կարծես վատ չեն նայել. «Լավ է, երբ երեխաները ոստիկանին ճանաչում են որպես հոգեբան, մասնագետ եւ ընկեր»: Նրա ասելով, դպրոցականները նույնիսկ «Ոստիկանը՝ դպրոցում» թեմայով հուզիչ շարադրություններ են գրել ու հայտնել իրենց դրական տպավորությունները:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

# «Կատանցի հանդիսատեսը ինդիկատոր է»

## Ալ. Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնի տնօրենի դիտարկումները

Այս տարին հոբելյանական է Կապանի Ալ. Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնի համար. լրանում է մշակութային օջախի 75-ամյակը:

«Առավոտը» հանդիպեց ՀՀ վաստակավոր դերասան, թատրոնի տնօրեն եւ գեղարվեստական ղեկավար Կամո Արզումանյանի հետ, որը ավելի քան 20 տարի բեմում է եւ ղեկավարում է թատրոնը: Նախ հետաքրքրվեցինք, թե «սահմանամերձ» դերասաններին չի՞ խանգարում մայրաքաղաքից հեռու լինելը, նրանք իրենց զգո՞ւմ են լիարժեք արվեստագետներ, մաս կազմո՞ւմ թատերական զարգացումներին: «Թատրոնում աշխատում է 23 դերասան, ունենք խաղացանկային 12 բեմադրություն՝ մանկական ներկայացումներից մինչեւ դասական ու ժամանակակից հեղինակների»,- տեղեկացրեց մեր զրուցակիցը, շարունակելով, թե իրենք մասնակցում են ավանդական դարձած Լոռու եւ «Թատրոն X» փառատոներին եւ մեծ ցանկություն ունեն ներկայանալու երեւանյան հանդիսատեսին: Հավելեց նաեւ, թե թատրոնի դերասանները իսկապես նվիրյալներ են. «ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով ժամկետային ծառայող 4 դերասան զբաղված լինելով խաղացանկային որոշ ներկայացումներում, հենց զինվորական համազգեստով գալիս են թատրոն, կերպարանափոխվում, այնուհետեւ շտապում զորամաս: Մեր թատրոնը սպասարկում է նաեւ Քաշաթաղը, հյուրախաղերով հանդես ենք գալիս այլ մարզերում, Կապանի դպրոցներում գործում են թատերական, երաժշտական խմբակներ եւ հաճախ դպրոցականների ելույթները կազմակերպում ենք թատրոնի բեմում՝ այսպիսով ցույց տալով, թե ազատագրված տարածքներում ինչ հրաշալի սերունդ կա: Միեւնույն ժամանակ, երեխայի համար, որն ընտրել է արվեստի ուղին, սա առիթ է շփվելու բեմի հետ: Օրերս էլ Ազգային օպերային թատրոնի տնօրեն Կամո Հովհաննիսյանի հետ համաձայնության եկանք առաջիկայում օպերային ու բալետային որոշ բեմադրություններ կապանցի հանդիսատեսին ներկայացնելու համար»:

Պարոն Արզումանյանը հայտնեց նաեւ, թե այս ուսումնական տարվանից Կապանում կբացվի Երեւանի կինոյի եւ թատրոնի պետական ինստիտուտի մասնաճյուղ. «Շուրջ 8 ամիս աշխատել ենք դիմորդների հետ, որոնք ոչ միայն Կապանից են, այլեւ Մեղրիից ու Քաջարանից: Այսօրվա դրությամբ 12 պետպատվերով տեղի համար ունենք 15 դիմորդ: Կարծում եմ՝ այս թվերը խոսուն են ու հարկ չկա մանրամասնելու, որ թատրոնը ունեցել է եւ կունենա իր հիմնական, տեղաբնակ դերասանական բազան»:



Հարցին՝ գո՞հ են պետության կողմից թատրոնների նկատմամբ որդեգրած վերաբերմունքից, մասնավորաբար՝ այն ֆինանսական միջոցներից, որոնցով իրականացնում են աշխատանքները, մեր զրուցակիցը պատասխանեց. «Մայրաքաղաքում եւ մեզ մոտ, օրինակ, դերասանները վարձատրվում են նույն չափով: Ուրիշ հարց է, որ երեւանցի դերասանը հրավեր է ստանում այս կամ այն հաղորդմանը կամ սերիալում նկարահանվելու, ինչը, ըստ էության, հավելյալ եկամուտ է ապահովում…»: Ռեպլիկին՝ չի՞ կարծում, որ մեր կուսակցությունները իրենց համամասնական ցուցակներում պետք է ընդգրկեն նաեւ թատերական գործիչներին, Կամո Արզումանյանն ասաց. «Դա նույնիսկ անհրաժեշտ է, որպեսզի թատերարվեստը իր դեսպանն ունենա Ազգային ժողովում»: Կապանցի հանդիսատեսին էլ որակելով որպես ինդիկատոր, նա նշեց. «Մեզ մոտ հնարավորինս արվում է ոչ միայն թատերարվեստի, այլեւ մշակույթի այլ ոլորտների երկրպագուների հետաքրքրությունները բավարարելու համար»:

Մեր զրուցակից դերասանից, թատրոնի վարչական ու գեղարվեստական ղեկավարից հետաքրքրվեցինք նաեւ, թե դժվար չէ՞ այդ ամենը համադրել: «Իհարկե՝ դժվար է: Թատրոնը չունի միայն գլխավոր ռեժիսոր, ինչը լրացնում ենք հրավիրյալ բեմադրիչներով: Օրինակ, վերջին շրջանում մեզ մոտ աշխատել են Գյումրիից Հովհաննես Հովհաննիսյանը, Հայկ Մնացականյանը՝ Արտաշատից, Վանաձորից Համլետ Գյուլզադյանը, Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնից Արմեն Սանթրոսյանը եւ այլն»,- պատասխանեց Կամո Արզումանյանը:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

# Ինչպես էին փեսացուին ինտեգրում տղամարդկանց շարքերը

## Կամ հոգեբանության գործոնն առասպելաբանությունում, ծեսերում եւ կյանքում՝ ընդհանրապես

«Էոս» հոգեբանության զարգացման նախաձեռնությունն օրերս կազմակերպել էր «Հոգեբանությունը առասպելի մեջ» թեմայով սեմինար, որի ընթացքում ներկայացվեց հոգեբանության գործոնն առասպելաբանության, հայկական հարսանիքի ծեսերում, ժամանակակից գովազդներում եւ գրականության մեջ:

Օրինակ՝ հոգեբան Արփինե Հակոբյանը ներկայացրեց առասպելի ուսումնասիրության հիմնական ոլորտները՝ կյանք, մահ, մարդ, տիեզերք: «Առասպելը եւ հոգեբանությունն անջատ չեն, քանի որ առասպելը աշխարհի այն դինամիկան է, որ մեր կյանքի ռիթմն է ապահովում, իսկ անալիտիկ հոգեբանությունն առաջ է քաշում այն գաղափարը, որ անհատը տիեզերական ինֆորմացիա կրող սուբյեկտն է»,- ասաց նա:

Հոգեբան Լիլիթ Փանոսյանը խոսեց հայկական հարսանեկան ծեսերի հոգեբանական նշանակությունից: Նախկինում հայկական հարսանիքը տեւել է 7 օր, 7 գիշեր: Աղջիկների համար ամուսնական տարիք է համարվել 10-12-ը, իսկ տղաների համար՝ 18-25-ը: Ի դեպ, 20 տարեկանը հատած աղջիկները համարվել են «դախացած» եւ «տանը մնացած»:



Որոշ ծեսեր ներկայումս էլ պահպանվել են գյուղերում կամ ենթարկվել փոփոխությունների: Նախկինում կանաչ եւ կարմիր ժապավեններ էին կապում հարսին ուղարկած նվերների եւ զարդերի տուփերի վրա, իսկ հիմա կանաչ-կարմիր թաշկինակների ու ժապավենների փոխարեն կոստյումների վրա ծաղիկներ են ամրացնում: Հոգեբանը նշեց, որ որոշ գյուղերում դեռ պահպանվել է «եզմորթեքի» արարողությունը, եւ այդ ծեսը ոչ այլ ինչ է, քան փեսացուին տղամարդկանց շարքերն ինտեգրելու արարողություն: Համեմատելով հարսանիքի հին եւ ներկա ծեսերը՝ Փանոսյանը փաստեց, որ հնում մարդիկ չեն առաջնորդվել սնահավատությամբ, այլ գիտակցել են յուրաքանչյուր ծեսի նշանակությունը. «Իսկ հիմա, երբ ասում ես որեւէ ծեսի մասին, պատասխանում են՝ ես չար ոգիներին չեմ հավատում»:

Լեզվաբան Ալվարդ Սեմիրճյանն էլ խոսեց հոգեբանության եւ գրականագիտության կապի մասին: «20-րդ դարի մոդեռնիստական գրականության մեջ առկա նեոմիֆոլոգիզմ հասկացությունն ուղղված է միֆի կիրառմանը եւ մեկնությանը, ինչը հետագայում հանգեցրել է հոգեբանության որոշ տեսությունների մշակմանը: Ըստ տեսաբանների՝ միֆը աշխարհի զգայական վերարտադրման եւ կյանքի ռացիոնալ իմաստավորման միջոց է»,- ասաց լեզվաբանը: Նա հավելեց, որ գրականության մեջ միֆերն ունեն որոշակի կիրառություն՝ հատկապես Չարենցի, Իսահակյանի, Լեւոն Խեչոյանի, Գուրգեն Խանջյանի գործերում, իսկ ամենատարածվածը Փոքր Մհերի միֆն է:

Սեմինարի մասնակից Սյուզի Կակոյանը խոսեց գովազդներից, ասելով, որ դրանք առավել տպավորիչ են, եթե հիմքում ունեն առասպելական, հեքիաթային նախնական բաղադրիչներ՝ արքետիպեր: Ըստ Կակոյանի, դրանցից մեկն, օրինակ՝ «ալվան ծաղկի» հնարքն է. հայտնի հեքիաթում հրեշը մահանում է՝ վերածնվելով գեղեցիկ արքայազնի, իսկ գովազդի պարագայում «երջանիկ» հերոսը «դժբախտ» հերոսին է տալիս մի արժեքավոր իր, որի ձեռքբերումից հետո «դժբախտ» հերոսը երջանկանում է. «Դա կիրառվում է շոկոլադների, կոսմետիկ միջոցների կամ ըմպելիքների գովազդներում»:

ԼՈՒԻԶԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

VIVACELL MTS
ԷՋԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

## Նոյյան տապանը գտնվում է Մեծ եւ Փոքր Մասիսների միջե՞ւ

«Բիբլիական Նոյյան տապանն ամենայն հավանականությամբ գտնվում է Մեծ եւ Փոքր Արարատների միջեւ՝ ինչ-որ մի տեղ»:

Այսպիսի վարկած հայտնել է ռուսաստանցի ճանաչված ալպինիստ, Ռուսաստանի ալպինիզմի հավաքականի նախկին գլխավոր մարզիչ, նախկին ԽՍՀՄ եւ ՌԴ վաստակավոր մարզիչ, 74-ամյա Վլադիմիր Շատաեւը: «Ռեգնում» գործակալությունը տեղեկացնում է, որ նա Նոյյան տապանի որոնումներով զբաղվում է արդեն 11 տարի: Այդ ընթացքում Շատաեւը Արարատ լեռը բարձրացել է բոլոր երթուղիներով, ավելի հաճախ որոնումներ կատարել 3800-4200 մետր բարձրության վրա, որտեղ, ըստ գրավոր սկզբնաղբյուրների, հավերժական սառույցի տակ պետք է լինեն տապանի մասունքները:



Շատաեւը անցած տարվա օգոստոսին Արարատի գագաթ (5165 մետր) բարձրացել է 13-րդ անգամ: Նա նշում է, որ Նոյյան տապանն ամենայն հավանականությամբ գտնվում է Մեծ եւ Փոքր Արարատների միջեւ, որտեղ իր ենթադրությամբ գաղտնի ռեժիմի օբյեկտներ կան: Ալպինիստի պատմելով, ինքը Արարատի արեւելյան լանջին գտնվելիս անձամբ է տեսել, թե ինչպես են մեքենաները մտնում այդ գաղտնի տարածք եւ անհետանում գետնի տակ: «Այնպես որ, ոչ ոք չի կարող այնտեղ գնալ եւ որոնումներ իրականացնել»,- ասում է ալպինիստը:

19-րդ եւ 20-րդ դարերում Նոյյան տապանը գտնելու հույսով բազմաթիվ արշավախմբեր են եղել Արարատ լեռան վրա: Հիմա էլ, տեղաբնակ քրդերի պատմելով, ամերիկացի մի ինչ-որ հետազոտող կա այնտեղ: Ու թեեւ այդ արշավախմբերից եւ ոչ մեկին չի հաջողվել հայտնաբերել բիբլիական տապանը, հետազոտողներից շատերը վստահեցնում են, որ տապանը հիշեցնող ինչ-որ բան հաստատ տեսել են:

## Հայ հեռացատկորդը դարձավ Վրաստանի չեմպիոն եւ օլիմպիական ուղեգիր նվաճեց

Թբիլիսիում անցկացված աթլետիկայի Վրաստանի բաց առաջնությունում Հայաստանի եւ Արցախի տասը ներկայացուցիչներից առավել հաջող հանդես է եկել հեռացատկորդ Վարդան Փահլեւանյանը:



Երեւանցի մարզիկը, ինչպես տեղեկացնում է ՀԱՕԿ-ի լրատվական ծառայությունը, 812 սմ արդյունքով ոչ միայն նվաճել է Վրաստանի չեմպիոնի կոչումը, այլեւ 2 սանտիմետրով գերազանցելով սահմանված օլիմպիական վարկանիշային նորման, նաեւ ամառային 30-րդ օլիմպիական խաղերի ուղեգիր է վաստակել՝ դառնալով Հայաստանի օլիմպիական պատվիրակության 22-րդ մարզիկը:

## Վերադարձավ Հայաստան ու նվաճեց Եվրոպայի չեմպիոնի կոչումը

Լառնակայում ավարտվեց ստենդային հրաձգության Եվրոպայի առաջնությունը, որտեղ կանանց մրցապայքարում չեմպիոնի կոչումը նվաճեց սպորտի վաստակավոր վարպետ Երջանիկ Ավետիսյանը:

Կիպրոսում երկու երեխաների մայր, 43-ամյա մարզուհին աշխարհի՝ եռակի, Ռուսաստանի՝ բազմակի չեմպիոնի կոչումներին ավելացրեց նաեւ Եվրոպայի հնգակի չեմպիոնի տիտղոսը:

Երջանիկ Ավետիսյանը հանգամանքների թելադրանքով տարիներ առաջ Հայաստանից հեռացել եւ բնակվում էր Ռուսաստանում: Սակայն այժմ նա ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանի առաջարկով կրկին հանդես է գալիս Հայաստանի դրոշի ներքո: Եվ ուրախալի է, որ վերադարձը նշանավորեց Եվրոպայի չեմպիոնի ոսկե մեդալով:

## Առաջին հաղթանակը՝ Անանդ-Գելֆանդ մրցամարտում

Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահում ընթացող շախմատի աշխարհի թագի համար մրցամարտում վեց անընդմեջ ոչ-ոքիներից հետո առաջին հաղթանակը գրանցվեց:

Յոթերորդ պարտիայում սպիտակներով



խաղացող իսրայելցի հավակնորդը 38-րդ քայլում առավելության հասավ աշխարհի գործող չեմպիոն, հնդիկ գրոսմայստեր Վիշվանաթան Անանդի նկատմամբ: Հաշիվը դարձավ 4:3՝ հօգուտ իսրայելցու: Այսօր մրցակիցները կհանդիպեն ութերորդ անգամ: Սպիտակներով խաղալու է Անանդը:

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

## Քանդակագործը SOS է հնչեցնում



Տիգրան Արզումանյանի՝ «Դվին» հյուրանոցի բակում գտնվող «Լեռնային պար» կամ «Լեռնապար» խմբաքանդակը վտանգված է: Քանդակագործը արդեն քանի տարի SOS է հնչեցնում. բոլոր քաղաքապետերը խոստացել են օգնել, բայց առայժմ «սայլը տեղից չի շարժվում»: Դեռեւս 2006-ի մարտ ամսին «Առավոտն» էլ է անդրադարձել խնդրին, որը գնալով ավելի է բարդանում: Երեկ «Հայելի» ակումբում Երեւան քաղաքի ավագանու անդամ Լեւոն Իգիթյանը հայտարարեց. «Ոչ միայն կոմպոզիցիան փրկելու հարցն է ծառացել, այլեւ միջավայրի գեղագիտական մակարդակը մի փոքր դեպի ճիշտը վերադարձնելու անհրաժեշտությունը»: Նա ասում է, որ մի սերունդ կա, որը ոչ միայն այս քանդակը, այլեւ մյուսները չի ճանաչում:

Ի դեպ, Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանն էլ «Լեռնապարի» հեղինակի հետ զրույցում խոստովանել է, թե չի հիշում այդ աշխատանքը: Նկարիչ Հաղթանակ Շահումյանը ճիշտ լուծում է համարում արդեն 20 տարի շինարարության հետեւանքով արգելափակված «Լեռնապարի» տեղափոխումը: Իր խոսքով՝ «Երեւանի ոչ բարով պատվավոր քաղաքացի» Ազատ Գասպարյանն էլ է նեղված, ու Լեւոն Իգիթյանին խնդրում է միջնորդել հարցը քաղաքապետարանում լսելի դարձնելու համար: Դերասանը հիշում է, որ 85 թվականին Հայաստան ժամանած սփյուռքահայ զբոսաշրջիկները ի՜նչ ոգեւորությամբ էին պար բռնել խմբաքանդակի շուրջը: Հեղինակն էլ փաստում է՝ Արցախամարտի մեկնող ջոկատները քանդակի մոտ էին երդվում: «Դվին» հյուրանոցի սեփականատերերը Ռուսաստանից են, 84-ին կանգնեցված քանդակն էլ հյուրանոցինը չէ, քաղաքի՛նն է, քաղաքն է պատվիրել ու քաղաքն է որոշում կայացնողը»,- ասում է Տիգրան Արզումանյանը ու հիշեցնում, որ այն միակ ազատ արված կոմպոզիցիան է, որը «են գլխից» լավ չի ընդունվել պետական իշխանությունների կողմից, որովհետեւ մի տեսակ դիսիդենտական քանդակ է ընկալվել: Լեւոն Իգիթյանը հույս ունի, որ Արզումանյանի ու Երեւանի այցեքարտը հանդիսացող այս քանդակը դեռ կտեղափոխվի ավելի նպաստավոր վայր, օրինակ, մանկական երկաթուղու թունելների մոտ՝ «Մալիբու» սրճարանի հետնամաս:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

# Հայերը ճարպակալում են. զգուշացնում են մասնագետները

## Բայց կան նաեւ անորեքսիայով տառապողներ

Գիրություն, անորեքսիա, ճարպակալում. այս խնդիրների բժշկական եւ հոգեֆիզիոլոգիական վերլուծությունը փորձեցին տալ էնդոկրինոլոգ Բաժինա Բաղրամյանն ու «Բորմենտալ» կենտրոնի հոգեբան Արմինե Փաշայանը:

Բաղրամյանի ձեւակերպմամբ՝ գիրությունը չի հանդիսանում հետեւանք հորմոնալ խանգարման. «Մարդկանց ընդամենը 1-5 տոկոսի դեպքում է լինում, երբ ճարպակալման հիմքում ընկած է լինում հորմոնալ տեղաշարժ, մնացած 95 տոկոսի պարագայում ճարպակալումը կրում է սննդային ալիմենտար բնույթ: Դա առաջանում է սխալ սննդային ռեժիմից, սխալ մթերքներ ընդունելուց, քիչ շարժվելուց: Բայց դա չի նշանակում, որ հետագայում անձը չի ունենա հորմոնալ խնդիր, որովհետեւ բավականին երկար ժամանակ հավելյալ քաշ ունեցող անձի մոտ վաղ թե ուշ ի հայտ են գալիս հորմոնալ տեղաշարժեր»:

Փաշայանն էլ նշեց, որ ավելորդ քաշը բացասաբար է անդրադառնում թե ֆիզիկական, թե հոգեկան առողջության վրա: «Ըստ ԱՀԿ-ի տվյալների՝ ճարպակալումը պաշտոնապես համարվել է հոգեսոմատիկ հիվանդություն, ինչը նշանակում է, որ այստեղ մեծ է հոգեբանական գործոնը: Ավելորդ քաշը չի կարող ունենալ հիմնովին բուժում, առանց հոգեթերապեւտի մասնակցության»,- հավելեց հոգեբանը: Ճարպակալումից, ավելորդ քաշից խուսափելու համար մասնագետները զգուշացնում են, որ պետք է սնվել նորմալ, յուրաքանչյուր 4,5 ժամը մեկ անգամ: Չպետք է քաղցը հագեցնել սուրճով, կոնֆետներով: Ամեն 4,5 ժամը մեկ մարդը գտնվում է քաղցած վիճակում, հետեւաբար՝ պետք է ուտել այնքան, որ հագենալ: Հայաստանում տարածված է ճարպակալման խնդիրը, ու միտում է զգացվում դրա ավելացման, բայց կան նաեւ անորեքսիայով տառապողներ:

Մասնագետները զգուշացնում են՝ մարդու համար իդեալական համարվում է այն քաշը, որով վերջինն իրեն հարմարավետ է զգում: Պարզվում է՝ ճարպակալման, ավելորդ քաշի խնդիր ունեցողների մեծամասնությունը երեւանցիներն են, քանի որ ճարպակալումը համարվում է ցիվիլիզացիայի արդյունք. հավաստիացնում են մասնագետները՝ բացատրելով, որ ամեն օր ավելանում է սննդատեսակների տեսականին, պակասում ֆիզիկական ակտիվությունը, ի հաշիվ տրանսպորտից օգտվելու, տնային տնտեսության մեջ գործածվող սարքերի, որոնք հեշտացնում են առօրյա գործերը մեր առողջության հաշվին: Ճարպակալման հետեւանքով առաջանում են սրտանոթային համակարգի խանգարումներ, ինչը վտանգավոր է եւ մահացու, ինչպես նաեւ՝ հենաշարժական ապարատի, ոտքի, ողնաշարի հիվանդություններ եւ այլն: Ճարպակալումն անդրադառնում է նաեւ հոգեկան առողջության վրա, առաջացնում է տագնապ, չհասկացվածություն, միջանձնային շփման մեջ խնդիրներ, այս երեւույթը վատ է անդրադառնում սեռական կյանքի վրա, մեկ բառով ասած՝ իջեցնում է կյանքի որակը, թույլ չտալով մարդուն ապրել լիարժեք: Չկա ճարպակալման գեն, պարզապես սերնդեսերունդ փոխանցվում են սննդային սովորությունները. նշում են մասնագետները, հավելելով՝ ինչը գալիս է ընտանիքից:

Ինչ վերաբերում է անորեքսիա կոչվածին, ապա, ըստ մասնագետների՝ դա լուրջ հիվանդություն է, որը մարդը ձեռք է բերում սեփական ձեռքերով: Այն 100 տոկոսով հոգեբանական խնդիր է, բնորոշ՝ հատկապես հասունության տարիքում գտնվող աղջիկներին, որոնք հնարավոր է՝ ավելորդ քաշի հետ կապված խնդիրներ էլ չունենան, բայց սկսում են նվազեցնել իրենց քաշը, ինչ-որ խոսակցությունների հետեւանքով, թե այսինչ հագուստն իրենց վրա լավ չի նստում եւ այլն:

ԵՎԱ ՀԱԿՈԲՅԱՆ